225

6

3р.– 81

46,85

سه ن ب

# ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ՚ի Ռուսաստան։

Տպեալ ՚ի տպ. ԼԱԶԱՐԵԱՆՑ

Յամի Տն 1836։

281.6 + 9(47.925)

1825-ԱՀ

5335-56

ԳԻՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Г. С. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի նախագաղափարին իւրական ձեռամբ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ մակագրեալ է.

Եղիցի ըստ այսմ.

Ի Ս. Պետերբուրգ,

11. Մարտ 1836.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՎԱՍՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՑ ԼՈՒՍԱՒՈՐ-ՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ.

### ԳԼՈՒԽ 1.

Յաղագս ընդհանրական իրաւանց և պաշտօնութեանց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ.

Յօդուած 1.

Լուսաւորչական Եկեղեցին Հայոց ՚ի Կայսրութեան Ռուսաց հաւասար այլոց օտարադաւանութեանց կայ ընդ Ամենազօր հովանաւորութեամբ ԿԱՅՍԵՐ.

Յօդ՛ 2,

՚Ի բոլոր ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆՆ Ռուսաց թոյլատրի ազատ դաւանել հաւատոյ ըստ ծիսի Լուսաւորչական Եկեղեցւոյն Հայոց՝ այնպէս, զի Ազգայինք նորին ըստ զօրութեան ընդհանուր Քաղաքական օրինադրութեանց զգուշասցին զմիտ ՚ի գայթակղելոյ զդաւանողս յորդորելով առ այլ հաւատս, որք ունին զազատ դաւանել ՚ի ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆՆ, մանաւանդ ՚ի Ուղղափառութենէ (Պրավոսլավնի)(ա), որ խստիւ արգելեալ է օրինօք Տէրութեան.

Յօդ՛ 3,

Սպասակատարութիւն Աստուածային պաշտամանց և կառավարութիւն հոգևորական գործոց Եկեղեցւոյն Լուսաւորչական Հայոց յանձն լինի ուխտի Եկեղեցականաց նորին ըստ զօրութեան օրինաց և կարգաւորութեան նոյն Եկեղեցւոյ.

Յօդ՛ 4,

Եկեղեցականք Լուսաւորչական Հայոց յամի՞ որք միանգամ վերաբերին առ պարզ հոգևոր պարտաւորութիւնս՝ կան միայն ընդ վերատեսչութեամբ Հոգևոր Իշխանութեան իւրեանց՝ զորմէ և կախին.

Յօդ՛ 5,

Հոգևոր գործք առ Եկեղեցական պաշտօնէից Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց Ռուսաստանեայց ենթարկին քննութեան և վճռոյ հոգևոր ատենից այնր Եկեղեցւոյ. իսկ ՚ի վէճս և յաղագս քաղաքական գործոց՝ ընդ իրաւարս, կամ ընդ այլ ատենիւ՝ որք ոչ են Եկեղեցականաց

Լուսաւորչական Հայոց․ նոյն Միաբանչաց (բ) և յայլ ամ գործս Եկեղեցւոյն վերա-
տեսչութ քաղաքական դատաստանաց ըստ Հասարակաց կանոնի, նշանակելով զմի ոք 'ի Հո-
գևորական կողմանէ ընդ ատեանս (դ) 'ի դիւանատան, ուր օրէնք Հրամայեն զատն դիւանատան
վասն Համաձայնութեան 'ի քննութեան նոյն գործոյն։

յօդ 6․

Եկեղեցականք Լուսաւորչական Հայոց Աստուածաբանեայց ազատ են յամ հարկատուութենէ և 'ի քաղաքական պարհանջողութեանց։

յօդ 7․

Սրբազանորդք դասակարգեայ (դ) Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ կանայք և զաւակունք նոցին յոչինչ դիպուածս ենթարկին մարմնաւոր պատժոյ։

յօդ 8․

Եկեղեցական Ժողովք Լուսաւորչական Հայոց Աստուածաբանեայց՝ հաւասար ընդ հասարակ հպատակս ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ՝ իրաւունս ունին մատուցանելոյ ՕԳ-ՍՏԱՓԱՌ ԶՕՐ մաղթանս 'ի ԱՆՈՒՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ յա-ղագս ձեռնհասութեան խնդրանաց և արդիւնաւորութեանց։

յօդ 9․

Եկեղեցիք Լուսաւորչական Հայոց Աստուածաբանեայց իրաւունս ունին ստանալոյ անշարժ կայքս․ այլ սակայն ոչ այլազգ կարեն 'ի ձեռս բերել կամ օտարացուցանել զայնս, բայց եթէ ԲԱՐՁ-ՐԱԳՈՅՆ բարեհաճութ ԿԱՅՍԵՐ ոչ խնդիր 'ի ձեռն Նախարարութեան ներքին գործոց ըստ սահմանելոյ կարգին։

## ԳԼՈՒԽ Բ․

## ՅԱՂԱԳՍ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԷՋՄԻԱԾՆԻ․

յօդ 10․

Գլխաւոր կառավարութիւն Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց, և ծայրագոյն տեսչութիւն Եկեղեցականաց նորին և Ջերմ կառավարման կանոնաց և ծխից այոր դատանաւ պատկանի Պատրիարքին Էջմիածնի, սմա գործակից լինի յատ Էջմիածնայ Լուսաւորչական Հայոց Սինհոդն․ բայց Պատրիարքն յաջինս դէպս կարէ առանձել ոչ Սինհոդոսին, ոչ այլում իմիք առնել կամ անձին գիտութեամբ, գիտաւունս և զօրութիւն ներհակաւորս խրատ առաջնոյ։

յօդ 11

Ծայրագոյն Պատրիարքն Էջմիածնի ընտրի յազգէն ազգէ Լուսաւորչական Հայոց ըստ կարգին սահմանելոյ առ այս։

յօդ 12․

Ի դատարկանալ աթոռոյ Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսին ամ Հայոց՝ Լուսաւորչական

Սինոդում Էջմիածնի առաքէ ծանուցողական նամակս յամ վիճակս Լուսաւորչական Հայոց, որք են՝ թէ ի Ռուսաստան, և թէ արտաքոյ սահմանաց նորին. նաև նշանակէ զպայմանաւոր միջոց առ ընտրութն նորոյ Պատրիարքի.

յօդ. 13.

Իւրաքանչիւր վիճակ Լուսաւորչական Հայոց առ ընտրութն Պատրիարքի նշանակէ զերկու պատգամաւորս (դէպուտատ) (ա) զմի եկեղեցական և զմի աշխարհական. Պատգամաւորն եկեղեցական պարտի լինել կամ նոյն ինքն Թեմակալ Առաջնորդն, կամ այլ ոք եկեղեցական նշանակեալ ի նմանէ. իսկ աշխարհական պատգամաւորն ընտրի յամ իշխանաւորաց, ի հարիւրապետաց (կուպեցաց)(ի մէշչանաց) և յայլոց պատուաւոր աշխարհական անդամոց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ որոց են իրաւունք ընտրութն ըստ վաղեմի ծիսի այսր եկեղեցւոյ.

յօդ. 14.

Ընտրեալ պատգամաւորք եթէ չկարասցեն ներկայանալ անձամբ ի վանս Էջմիածնի ցնշանակեալ ժամանակն ի ընտրութն Պատրիարքի, ունին իրաւունս յայտնել զքուէք գրաւորութն իւրեանց՝ հաստատելով զայն ի Սինոդում Էջմիածնի.

յօդ. 15.

Բաց ի պատգամաւորաց (դէպուտատ) մասնակցին յընտրութն Պատրիարքի ամ Անդամք Լուսաւորչական Հայոց Սինոդոսին Էջմիածնի, և եւթն երիցագոյն Եպիսկոպոսունք՝ որք յայնժամ գտանիցին յԷջմիածին. իսկ ի դիպուածս պակասութն Եպիսկոպոսաց, զայն թիւ լնուն երիցագոյն վարդապետք տեղւոյն.

յօդ. 16.

Այն ընտրութիւն կատարեսցի յԷջմիածին ի Մայր Եկեղեցւոջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ձևով պահպանութ ծիսից սահմանադրելոց ի Լուսաւորչական Եկեղեցին Հայոց առ այս.

յօդ. 17.

Զկնի հաւաքման ձայնից բոլոր ժողովականաց և հաւաք լինելոյ գրաւոր դատողութեանցն հասելոց ի Սինոդոսն ըստ զօրութն 14 երրորդ յօդուածոյն, չորեքին աւագագոյնք ըստ առաւելութն ձայնիցն առնելոց ի նպաստ իւրեանց ձայնաչին ունիցին իրաւունս ընտրեալ լինելոյ ի Կանդիդատս (գ). իսկ ի դիպուածս հաւասարութ ձայնի, վիճակն որոշեսցէ՝ թէ ոյք պարտին համարիլ աւագագոյնք. ի նոցանէ բոլոր ժողովականք առնեն ընտրութն երկուց կանդիդատաց ի պաշտօն Հայրապետութն Պատրիարքի.

յօդ. 18.

Զկնի այսր ընտրութն՝ ժողովն առաքէ զերիս պատգամաւորս յանդամոց իւրոց առ գլխաւոր Կառավարիչն Վրաստանի, կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանգաց՝ որ յղեսցէ երկուց կանդիդատաց ընտրելոց առաջի առնէ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ի բարեհաճութիւն, ընդ ձեռն Նախարարութեան Ներքին գործոց.

յօդ. 19.

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ նշանակելով զծայրագոյն Պատրիարքն Էջմիածնի՝ զկաթողի-

կամ Հայկազանց՝ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ յանձնէ նմա զառանձին հովուապետական վճիռ այսր ատենին. և հրամայէ զնա երդնուլ լինել հաւատարիմ առ գահն մեր Ռուսաց կատարել զծառայութիւնս ըստ վաղեմի ծիսի և սովորութեան Լուսաւորչական Եկեղեցւոյն Հայոց։

յօդ 20

Պատրիարքն Էջմիածնի կրէ զնոյն տիտղոս ([illegible])՝ զոր ունէին ՚ի վաղնջուց ծայրագոյն Պատրիարք կաթողիկոսունքն Հայկազանց.

յօդ 21

Յամենայն պաշտամունս ՚ի մէջ եկեղեցեաց Լուսաւորչական Հայոց՝ անուն Պատրիարքի ԷՋ-ՄԻԱԾՆԻ յիշատակի անմիջապէս զկնի ԿԱՅՍԵՐՆ մեր Ռուսաց և Օգոստափառ ՏԱՆ ՆՈՐԱ.

յօդ 22

Համաձայն նախնի սովորութեան Կաթողիկոսն յաւելեալ իւրում ՚ի կաթողիկոսարանէն կամ ՚ի պալատէ Էջմիածնի՝ իրաւունս ունի յօրինել ՚ի պատուաւոր պաշտօնէից՝ որ ՚ի Հայոց պատկանելոց վանիցն Էջմիածնի, յամենայն անդամոց հոգևորականութեան և յերկուց եկեղեցական աստիճանաւորաց՝ յորոց մին կրէ զպաշտօն Կաթողիկոսական և այլն.

յօդ 23.

Ըստ օրինակի վաղեմի օրինաց Լուսաւորչական Եկեղեցւոյ՝ Հայոց Պատրիարքն Էջմիածնի իբրև ծայրագոյն Կաթողիկոս Հայկազանց՝ ինքն միայն ունի իրաւունս եփելոյ և օրհնելոյ զսր. միւռոն վս մեր եկեղեցեաց այսր դաւանութեան.

Օծանելիքն բաշխումն սուրբ միւռոնի ՚ի Պատրիարքէ և ՚ի նուիրակացն առաջնորդաց ՚ի նմանէ լինի ըստ հին կարգաւ.

յօդ 24.

Պատրիարքն Էջմիածնի իբրև Հոգևոր Հովուապետ Հայկազանց հետևողէ զթեմակալ առաջնորդս և զայլ մեր Եպիսկոպոսունս Լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց՝ դնելով զի համեմատ վաղեմի կանոնաց նոյն եկեղեցւոյ մի՛ բազմասցի թիւ անդէմ եպս. առանց յայտնի հարկաւորութեան.

յօդ 25.

Պատրիարքն հետևելով վաղեմի կանոնադրութեանց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց, և հաստատեալ կանխաւ կարծեաց Սինոդոսին Էջմիածնի՝ առայ զվճռականն վճիռ մեր պարզ հոգևոր գործոց վերաբերելոց առ վարդապետութիւնս հաւատոյ, առ պաշտամունս եկեղեցւոյ և առ այլս սոյնպիսիս.

յօդ 26.

Ծայրագոյն Պատրիարքն Էջմիածնի ունի իրաւունս վարձատրելոյ համեմատ կարգաւորութեան Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց, զառաքինի և զդաստիարակ անդամս ամենայն Եկեղեցւոյն Հայոց՝ ըստ կանոնական խաչիւք, կամիլաւկայ կոչեցեալ գլխարկօք և արախճիօք։

յօդ՝՝ 27.

Պատրիարքն Էջմիածնի իբրև ընդհանրական Հօգևոր Հովիւ Հայկազանց՝ ըստ օրինակի Հայրապետին Ներսէսի Շնորհալւոյ կոչեցեալ (է) ընդ ժամանակս ժամանակս առաքել զՀայրա-պետական Կոնդակս հանդերձ օրհնութեամբ իւրով առ Լուսաւորչական Հայս ամ տեղեաց և կողմանց, յորդորելով զնոսա առ խաղաղական և առաքինի կեանս, և առ հնազանդութիւն օրինաւոր իշխանութեանց՝ համաձայն կանոնաց սրբոյ Աւետարանի.

յօդ՝՝ 28.

Ի բազմիլ ԿԱՅՍԵՐՑ ամ Ռուսաց յԱթոռ Ինքնակալաց՝ Պատրիարքն Էջմիածնի առաքէ զմի ոմն 'ի նախապատիւ անդամոց ուխտի Լուսաւորչական Հայոց Եկեղեցականաց՝ մատուցանել ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾԱՓԱՌՈՒԹԵԱՆ զամենահպատակ շնոր-հաւորութիւն՝ խնդրելով յԱմենողորմ բարեհաճութենէն յաղագս առաքելոյն գտանելոյ 'ի հանդիսի թագադրութեանն՝ նորին, և կամ 'ի դէպս անհնարութեան՝ Դեպուտատի իւրում.

յօդ՝՝ 29.

Համաձայն կանոնաց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ Ծայրագոյն Պատրիարք ԿԱԹՈ-ՂԻԿՈՍ, զհաստատուն բնակութիւն իւր ունի 'ի վանս Էջմիածնի. Յորժամ հարկաւոր հա-մարի Նա հեռանալ 'ի վանաց անտի աւելի քան զչորս ամիս, հայցանէ առ այս 'ի ձեռն Գըլ-խաւոր կառավարչին Վրաստանի Կովկասեան և յայնկոյս Կովկասու երկրաց նահանգաց, և 'ի ձեռն Նախարարին Ներքին գործոց, զԲարձրագոյն հաճումն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾԱՓԱՌՈՒԹԵԱՆ.

յօդ՝՝ 30.

Պատրիարքն Էջմիածնի ունի իրաւունս տալոյ զարձակուրդ որ Անդամոց Լուսաւորչական Հայոց Սինհոդոսի, նոյնպէս և Վիճակաւոր Առաջնորդաց և ընդհանրապէս ամ Եպիսկոպոսաց այլ դաւանութեան չորեք ամսեայ ժամանակաւ. յերկարաւուն արձակուրդս և արտաքոյ սահմանի (այսր Տէրութե) Պատրիարքն արձակէ զնա Բարձրագոյն կամօք ԿԱՅՍԵՐՆ. Անդամոց Սինհոդոսի ոչ աւելի քան երկուք կարեն արձակիլ 'ի միում ժամանակի.

յօդ՝՝ 31.

Պատրիարք Կաթուղիկոսն իբրև անմիջական պետ վանաց Էջմիածնի, տնօրինէ զգործս նորին տեսչական հսկողութեամբ իւրով ըստ ճիշդ զօրութեան եկեղեցական կանոնաց.

յօդ՝՝ 32.

Ի վախճանիլ Պատրիարք Կաթուղիկոսին, անյապաղ ժողովի Հայոց Լուսաւորչական Սինհո-դոսն Էջմիածնի առ 'ի զգուշանալ որպէս թղթոյն եղելոց առ Նմա և վերաբերելոց առ գործս կառավարութեան և եկեղեցւոյ, նոյնպէս և ընդ տեսչութեամբ նորին եղեալ Եկեղե-ցական գոյից.

Ծանօթութ. Պատրիարքն իշխան է տնօրինել զսեպհական գոյս իւր ըստ իւրում հաճոյ. եթէ չիցէ արարեալ կտակ, գոյք նորա անցանեն առ օրինաւոր ժառանգս նորին. իսկ եթէ չի-ցեն նմա ժառանգք՝ այն գոյք հաշուին ընդ գոյս Լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց.

## ԳԼՈՒԽ 3.

## ՅԱՂԱԳՍ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՀՈԴՈՍԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆ.

### յօդ. 33.

Լուսաւորչական Հայոց Սինհոդոսն Էջմիածնի՝ ընդ նախագահութեամբ Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսին՝ բաղկանայ ՚ի չորից Արք Եպիսկոպոսաց կամ Եպիսկոպոսաց, և ՚ի նոյնչափ Վարդապետաց՝ որք հաստատուն բնակութիւն իւրեանց ունին յԷջմիածին.

### յօդ. 34.

Առ իւրաքանչիւր տեղի Անդամոց Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին՝ Պատրիարքն ՚ի ձեռն Գլխաւոր կառավարչին Վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու երկրաց նահանգաց, և ՚ի ձեռն Նախարարութեան Ներքին գործոց՝ առաջի առնէ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐՆ երկուս կանդիդատս.

### յօդ. 35.

Առ պարտիս գործողութեան Հայոց Լուսաւորչական Սինհոդոսին ՚ի մասն կառավարութեան վերաբերին.

1. Դիտողութիւն ՚ի վերայ գործառնութեանց ամ Ատենից և պաշտօնակատար անձանց՝ ստորադրելոց այսմ Սինհոդոսի.

2. Վերատեսչութիւն բարեկարգութեանց նոցին ստորադրեալ վանորէից, Եկեղեցեաց, Դպրոցաց և Աստուածահաճոյ շինուածոց.

3. Վերատեսչութիւն կարգին կառավարութեան գոյից Լուսաւորչական Եկեղեցեաց Հայոց.

4. Նախնական քննութիւն գործոց վերաբերելոց առ շինութիւն վանորէից, Եկեղեցեաց և դպրոցաց, և խնդրումն առ այն՝ ՚ի ձեռն գլխաւոր կառավարչին Վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու երկրաց նահանգաց, և ՚ի ձեռն Նախարարութեան Ներքին գործոց՝ Բարձրագոյն հրամանի ԿԱՅՍԵՐ.

5. Թոյլատուութիւն Հայկազանց Լուսաւորչական Եկեղեցւոյ յաղագս վճռել եկելոց ընդունիլ զկարգ Եկեղեցական և նուիրել զանձինս ՚ի Վանականութիւն.

6. Թոյլատուութիւն մերկանալոյ զվանականութիւն և ընդհանրապէս զհոգևորական կարգ.

7. Վախճանական վերահասութիւն գործոց՝ ըստ խնդրական բանից յաղագս մեռանելոյ ամուսնութիւն.

8. Թոյլատուութիւն ժողովելոյ ՚ի վիճակաց զկամաւոր նուէրս յօգուտ վանորէից, Եկեղեցեաց, Դպրոցաց և Աստուածահաճոյ շինուածոց այլոց վիճակաց.

9. Դիտողութիւն ՚ի վերայ խնամակալութեան որբոց և այրեաց Սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից.

10. Առաջարկութիւն կարծեաց՝ յորժամ Կաթողիկոսն նախանշանակէ յաստիճան Եպիսկոպոսութեան զԵկեղեցականս առանց Կարգելոյ զնոսա միանգամայն ՚ի պաշտօն Թեմակալի.

11. Առաջի առնել Պատրիարգին զդիտողութիւնս իւր զայնց հոգևորականաց՝ զորս կամի նա

տուողել 'ի բաշխումն որբոց Սինոդի ։

12, Բացայայտութիւն կարծեաց առ հաղորդումն առաջարկելոց 'ի Պատրիարքէն՝ յեպս_կացուցանել ։

13, Պահպանութիւն ճիշդ ցուցակաց Լուսաւորչական Հայոց ամ̃ Եկեղեցեաց, վանորէից Դպրոցաց և Ընծայարանաց շինուածոց՝ որ 'ի Սահմանս Ռուսիոյ՝ առանձինն ըստ իւրաքանչիւր վիճակի ։

14, Պահպանութիւն նոյնպէս ցուցակաց յաղագս ամ̃ որ 'ի Ռուսաստան Եկեղեցակա_նաց՝ ամուսնացելոց և Կուսակրօնից Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց, և այլոց անձանց պատ_կանելոց առ տեսչութիւն Սինոդոսին ։

15, Պահպանութիւն պատկանաւոր մատենից յաղագս ամ̃ գոյից վանորէից և Եկեղեցեաց Լուսաւորչական Հայոց 'ի Սահմանին Ռուսաստանի ։

16, Ներկայացանել ամի ամի նախարարութեան ներքին գործոց 'ի ձեռն գլխաւոր կառա_վարչին Անդրկովկասեան և յայնկոյս կովկասու երկրաց նահանգաց՝ զտարեկան ծանօթու_թիւնս զառարկայիցն նշանակելոց 'ի յօդուածս՝ 13, 14, և 15 երրորդ, զվիճակատար տեղեկու_թիւնս յաղագս ծնելոց, մեռելոց և պսակելոց որ 'ի բոլոր Լուսաւորչական Հայոց վիճակս Ռուսաս_տանի, և զընդհանուր տարեկան հաշիւ ։

յօդ̃ 36,

'Ի դատաստանական մասին՝ քննութեան և վճռահատութեան Լուսաւորչական Հայոց Սինո_դոսին Էջմիածնի՝ պատկանին,

1, Դատաստանք զԱնդամոց նոյն ինքեան Սինոդոսին ։

2, Դատաստանք զԹեմակալ առաջնորդաց Լուսաւորչական Հայոց Վիճակաց, և զվի_ճակային (Կոնսիստորիաց) Հոգևոր Ատենից ։

3, Քննութիւն անկանոն գործողութեանց անդամոց նոյն Սինոդոսի և Թեմակալ ա_ռաջնորդաց ։

4, Այն գործք՝ քննեալք 'ի Լուսաւորչական Հայոց վիճակային Հոգևոր Ատեանս, և մու_ծեալք ըստ բողոքմանց 'ի Սինոդոսն Էջմիածնի՝ յաղագս պսակաց, և որբազննագործ և սա_բին Եկեղեցական պաշտօնէից յանցաւորութեանց՝ ոչ պատկանելոց մերձաւոր դատարանաց՝ յաղագս վճռմանց նոցա ընդ խնդիր, և այլն ։

յօդ̃ 37,

Լուսաւորչական Հայոց Սինոդոսն Էջմիածնի ընդ անմիջական վերատեսչութեամբ Ծայրա_գոյն Պատրիարքին՝ տայ գլխաւորականն վճիռ ամ̃ գործոց վերաբերելոց առ վարդապետութիւն հաւատոյ, առ Եկեղեցական պաշտամունս, ծէսս և պսակս, և առ այն յանցաւորութիւնս Եկե_ղեցականաց՝ որք ոչ պատկանին քննողութեան մերձաւոր Դատարանաց ։ Այս Սինոդոս ըստ գործոց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց Ռուսաստանեայց՝ կայ ընդ վերատեսչութեամբ Կառավարիչ Սինկլիտոսին (Սենատին) և Նախարարութեանն Ներքին գործոց, հաւասար այլոց Ծայրագոյն Հոգևոր ատենից օտարազգի դաւանութեանց ։

ճ

յօդ̃ 38,

Վճիռք ըստ գործոց՝ որ յաղագս դատաստանաց զԹեմակալ առաջնորդաց և զԱնդամոց Լու_սաւորչական Հայոց Սինոդոսին, նոյնպէս և զանկանոն գործողութեանց նոցա՝ եթէ այսոքիկ եկեղեցականք դատապարտին 'ի պատիժ ինչ՝ ոչ այլազգ ածին 'ի կատար, բայց եթէ զկնի յայտնե_

Ըստ բարձրագոյն հրամանի ԿԱՅՍԵՐ առաջնորդ ձեռն նախարարութեան ներքին գործոց։

յօդ. 39.

Լուսաւորչական Հայոց Սինհոդոսն Էջմիածնի առաջի առնէ նախարարութեան ներքին գործոց ՚ի ձեռն գլխաւոր Կառավարչին վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու երկրաց նահանգաց՝ զամ գործոց և գիտուածոց՝ որոց վն խնդրի վճիռ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, կամ որոց վն հարկաւոր են կարգադրութիւնք նախարարութեան. նաև զգործոց՝ որք պահանջեն զհամաձայնութիւն ընդ այլոց նախարարութեանց, և ընդ գլխաւոր կառավարչաց առանձին մասանց Թագաւորական կառավարութեան. նոյնպէս և զվիճից՝ որք կարեն ծագել ՚ի մէջ Սինհոդոսի Հայոց և հոգևոր իշխանութե օտարազգի դաւանութեանց. և վերջապէս զպատահական երկբայութեանց՝ թէ արդեօք այս ինչ գործ վերաբերի առ ատենութիւն նորա, թէ ոչ։ Իսկ զգործոցն՝ յորս հարկաւորին հաղորդակցութիւնք ընդ Զօրապետաց (Գեներալ գուբերնատորաց) ընդ նահանգապետաց (գուբերնատորաց) և ընդ այլոց տեղական կառավարութեանց, Լուսաւորչական Հայոց Սինհոդոսն Էջմիածնի առաջի առնէ գլխաւոր կառավարչին վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու երկրաց նահանգաց։

յօդ. 40.

Լուսաւորչական Հայոց Սինհոդոսն Էջմիածնի վարի ըստ կանոնաց [illegible] (ը), բայց յամ այլոց հոգևորական գործս Պատրիարքն ունի զձայն վճռողական. իսկ յայլ գործս՝ ուր է հաւասար են ձայնք Անդամոցն՝ ձայն նորա իբրև նախագահի, է հակամէտ. (թ)

յօդ. 41.

Ի բնութեան իրաց՝ յորս Պատրիարքն Էջմիածնի ունի զձայն վճռողական, չգտանի անձամբ ՚ի Սինհոդոսի, այլ հասու եղեալ եղբարկացուցէ Սինհոդոսին յօրագրութիս մատուցեալս նմա, տայ ըստ այնց զիւր վճիռ.

յօդ. 42.

Յորժամ Պատրիարքն Էջմիածնի ոչ գտանի անձամբ ՚ի Լուսաւորչական Հայոց Սինհոդոսի՝ զտեղի նորա ունի երիցագոյն ՚ի Մրք եպիսկոպոսաց կամ յեպիսկոպոսաց Անդամոց այսր Սինհոդոսի։ Նա վարէ զամ իրաւամբ նախագահի յայնոսիկ դէպս միայն, յորժամ Պատրիարքն ինքնին չկարէ ներկայ գտանիլ ՚ի պատճառս հիւանդութե կամ բացակայութեան յԷջմիածնէ. իսկ պարզ հոգևորական գործք՝ յորս Պատրիարքն ունի զձայն վճռողական, յայնպիսի դէպս կարեն վճռիլ առանց Պատրիարքին ՚ի ժամ պարապութե Պատրիարքական Աթոռոյն։ Վճռահատութիւն այնպիսեաց գործոց յետաձգի ցընտրութե նորոյ Պատրիարքին։

յօդ. 43.

Կարգ գործառնութեան Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Էջմիածնի, իրաւունք և պարտաւորութիւնք Անդամոց և Աստիճանաւորաց Դիւանատան նորին, սահմանադրին ընդհանուր կարգադրութեամբ՝ զոր ունիմք կալ ՚ի ներքոյ.

յօդ. 44.

Սինհոդոսն Էջմիածնի ժողովի երիցս կամ զանէ երկիցս յեօթնեկի նկատմամբ գործոցն մանելոց անդր։

10287

Յօդ՝ 45․

Ի Սինհոդոսն Էջմիածնի լինի առանձին Պրոկուրոր (Փ․) կարգեալ ի Կառավարիչ Սինկղիտոսէն (սենաթէն) [illegible]՝ որք գիտեն զլեզուս Ռուսաց և Հայոց․ նմա նշանակի ռոճիկ յԱրքունի գանձարանէն համեմատ իւրում պաշտաման։

Յօդ՝ 46․

Պրոկուրորն Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Էջմիածնի ի գործողութիւնս իւր վարի ըստ հանրական կանոնադրութեանց՝ որ վասն պաշտօնատարութեան Պրոկուրորի։ Այն առ ունի զհսկատար հսկողութիւն ի վերայ դատաստանական և կարգադրական գործոց յառաջացելոց ի Սինհոդոսի անդ․ և առաջին կայ գտանի յընտրութեան Ծայրագոյն Պատրիարքին Էջմիածնի․ զդատաստանական գործոց Պրոկուրորն առաջի առնէ (Մինիստրութիւն իւստիցի) Նախարարութեան իրաւանց, իսկ զայլոց գործոց՝ Նախարարութեան Ներքին գործոց։ Նա նոյնպէս ըստ գործոյն Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Էջմիածնի դնէ առաջարկութիւնս և առ գլխաւոր կառավարիչն Վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու երկրաց նահանգաց։

Յօդ՝ 47․

Լուսաւորչական Հայոց Սինհոդոսն Էջմիածնի ունի զառանձին գանձապետ՝ զոր կարգէ ինքն Սինհոդոսն յեկեղեցական կամ յաշխարհական անձանց՝ որք իցեն հմուտ հաշուատարութեան, և նշանաւորք բարեպաշտութեամբ և անշահախնդրութեամբ։ Այս գանձապետ ունի ընդ տեսչութեամբ իւրով միայն զգումարս դրամոց պատկանելոց Էջմիածնի Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին՝ առանց ձեռնամուխ լինելոյ ի գումարս վանիցն Էջմիածնի։

Յօդ՝ 48․

Գանձապետին Լուսաւորչական Հայոց Սինհոդոսի հաւատացեալ լինի ընդունել և պահպանել զամ գումարս պատկանելոց նմին, և ում հարկն է հատուցանել յայնց սահմանեալ կարգաւ համաձայն կանոնաւոր հրամանագրութեանց Հայոց Լուսաւորչական Սինհոդոսին ըստ զօրութեան օրագրութեանց նորին։

Ծանօթութիւն։ Լուսաւորչական Հայոց Սինհոդոսն Էջմիածնի առնու յանձն առնել զպատասխանատուութիւն վերահասու անփոյթութեան իւր առ ձեռն գումարաց և հաշուաթղթոց՝ եղելոց ընդ պահպանութեամբ գանձապետին, և որինչ ցուցի առ այն՝ գրի յօրագրութեան։

Յօդ՝ 49․

Գանձապետն ունի զպատշաճաւոր տումարս ելևմտից և ծախուց իւր դրամոց պատկանելոց Լուսաւորչական Հայոց Սինհոդոսի։ Նոյնպէս տումարք ըստ ընդհանուր կարգին պարտին լինել ժապաւինեալ և հաստատեալ կնքով Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին և ստորագրութեամբ երկուց Անդամոցն նորին և Պրոկուրորի։

Յօդ՝ 50․

Ամ գումարք դրամոց Հայոց Լուսաւորչական Սինհոդոսի, և գրաւոր վկայութիւնք Եկեղեցական գոյից եղեալք առ գանձապետն՝ պարտին պահպանիլ ի սնդկի անդ յառանձին [illegible] ուր լինի ժողովն Սինհոդոսի։ Սնդուկն այս փակեալ երիւք զանազան կղպէօք, և կնքեալ կնքով Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին․ մին ի բանալեաց կղպէոցն պահպանի առ գանձապետն․

Իւր մուտքն՝ մին մի առ այնուիկ երկուսն Անդամոց Սիւնհոդոսին, որոց յատկապէս յանձնել իցէ վերահասութիւն հաշուական գործոց նորին։ Այսպիսի անդամք յերրորդում նուագս բանալոյ փակին պարտին առաջիկայ գտանիլ։

Յօդ. 51.

Գանձապետն ուշադիր լինի զի ՚ի Սիւնհոդոսական արկղ մի՝ հասցեն առանց հարկաւորութեան մեծամեծ գումարք դրամոց, և առաջի առնէ Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին յաղագս այսց գումարս նորա յանձնել տոկոսաւք ըստ օրինադրելոյ Կարգին։ Յուշութիւն այն գումարաց ՚ի ձեռս մասնաւոր անձանց յայնժամ միայն թոյլատրի, յորժամ նոյն Սիւնհոդոսն հանոյէ զայն շահաւէտ. և այսու կերպիւ հաստատելոյ գումարն մասնաւոր անձին՝ ապահովելոյ իցէ հաւաստեամ գրաւականաւ։

Յօդ. 52.

Դիւանատուն Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսի բաղկանայ ՚ի միոյ Ատենադպրէ (Սեկրետար), յերկուց օգնականաց նորին, ՚ի Խորհրդականէ, ՚ի գործակալէ (Էկզեկուտոր), ՚ի դրծապահէ (Արխիւարիւս) և ՚ի հարկաւոր թուոյ գրագրաց։ Այսպիսի Պաշտօնեայք կարգին ըստ ընտրութեան Սիւնհոդոսին Էջմիածնի հաստատութեամբ Պատրիարգին։

Յօդ. 53.

Պրոկուրորն Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին է ՚ի վեցերրորդում կարգի (կլասի). Գանձապետն՝ եթէ իցէ նա յաշխարհականաց, յեօթներրորդում. Ատենադպիրն յութերրորդում. Գործակալն և դրծապահն յիններրորդում. օգնական Ատենադպրին և Խորհրդականն ՚ի տասներրորդում՝ ցորչափ ունին նոքա յայսմիկ պաշտօնեա, և եթէ հանին ըստ նախկին Ծառայութեան կամ ըստ այլոց տեղեաց զԲարձրագոյն աստիճանս։

Յօդ. 54.

Անդամք Հայոց Լուսաւորչական Սիւնհոդոսին Էջմիածնի՝ Պրոկուրորն, Գանձապետն և Պաշտօնեայք Դիւանատան Նորին՝ ՚ի մտանել ՚ի պաշտօն իւրեանց երդնուն ըստ հաստատեալ կանոնի առ ՚ի հաւատարմութեամբ ծառայել ՏԷՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ և առ խղճմտութեամբ կատարելոյ զպարտաւորութիւնս իւրեանց։

## ԳԼՈՒԽ 4.

## ՅԱՂԱԳՍ ԹԵՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԵԱՑ.

Յօդ. 55.

Լուսաւորչական Հայոց Եկեղեցիք բաժանին ՚ի վիճակս՝ որ կառավարին ձեռք Եպիսկոպոսաց այր գաւառութեան։

Յօդ. 56.

՚Ի սահմանս Ռուսիոյ գտանին վեց Վիճակք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ. Որ-

ջիւն Նախիջևանայ և Բեսարաբիոյ, Երկրորդ Աստրախանայ, Երրորդ Երևանայ, Չորրորդ Վրաստանի, Հինգերորդ Ղարաբաղայ և Վեցերորդ Շիրուանայ։

Ի վիճակին Նախիջևանայ, և Բեսարաբիոյ պատկանին Լուսաւորչական Հայոց Եկեղեցիքն որ ՚ի Ս. Պետերբուրգ, ՚ի Մոսկով, ՚ի գաւառս Նոր Ռուսիոյ և ՚ի Նահանգին Բեսարաբիոյ։ Ի վիճակին Աստրախանայ այլ ամ Լուսաւորչական Հայոց Եկեղեցիք ՚ի Ռուսիոյ՝ բաց ՚ի Վրաստանէ և ՚ի գաւառացն՝ որ յայնկոյս Կովկասու։ Ի վիճակին Երևանայ Լուսաւորչական Հայոց եկեղեցիք՝ որ ՚ի Նահանգս Երևանայ, Նախիջևանայ, Օրդուբադու և գաւառին Շի-րակայ. ՚ի սմա անկանի ՚ի վիճակէն Ղարաբաղայ և Մետրապոլիտութիւն Տաթևայ հանդերձ բովք հօտիւ իւրով։ Առաջնորդ վիճակիս ըստ վաղեմի կանոնադրութեան է նոյն ինքն Պատ-րիարքն՝ որ կառավարէ զայն ՚ի ձեռն յաջորդաց իւրոց, և ունի զնստ ՚ի քաղաքին Երևան՝ ՚ի Էջմիածին Հայաստանի. նոյնպէս ՚ի Շիրակ և ՚ի Տաթև։ Ի վիճակին Վրաստանի պատ-կանին Եկեղեցիքն Հայոց՝ որ են յատկապէս ՚ի Վրաստան, ՚ի գաւառն Գանձակայ (Ելի-սաւէթպոլոյ) և ՚ի գաւառսն Բորչալուայ, Ղազախայ, Շամշադնայ և ըստ մասին Փամբա-կայ, յաշխարհին Տայոց (Ախալցխայ) Մինգրէլթի և ՚ի Գուրիա։ Յայսմ վիճակի կարգին յաջորդք Խնամակալ Առաջնորդի ՚ի Գանձակ, ՚ի Տայս և յԻմերէթ։ Ի վիճակին Աղուանից (Ղարաբաղու) Լուսաւորչական Հայոց Եկեղեցիքն՝ որ ՚ի գաւառս յատկացեալս Ղարա-բաղու, ՚ի բաց առեալ զՄետրապոլիտութիւն Տաթևայ հօտին հանդերձ. և Շաքւոյ և Խաչենոյ. Յայսմ վիճակի կարգի յաջորդ Խնամակալ Առաջնորդի ՚ի Շաքի։ Ի վիճակին Շիրուանայ պատկանին Եկեղեցիք Լուսաւորչական Հայոց՝ որ ՚ի Նահանգս Շիրուանայ, Ղուբայու, Բաքւոյ և Դարբանդայ։ Յայսմ վիճակի չիք առանձին յաջորդ Խնամակալի։

Ծանօթութիւն։ Գաղթականք Հայոց ՚ի Տաճկաստանէ փոխադրեալք յաշխարհին Տայոց, և ՚ի գաւառին Շիրակայ՝ կառավարին ըստ նախկին սովորութեան ՚ի գաղթելոյն ընդ-նոսա ՚ի Կարապետէ և ՚ի Մանուէլէ Արք եպիսկոպոսացն, անկախ ՚ի Խնամակալ Առաջնորդաց և անմիջապէս ստորադրեալ պատրիարքին. իսկ յելանել սոցա յայսցիկ աւելեաց՝ Կառավարու-թիւնն հոգևորական գործոց նոյն գաղթականաց անցցէ հասարակ ընդ ժողովրդոցն Հայոց յիշ-խանութիւն Խնամակալ Առաջնորդաց. Գաղթականքն Շիրակայ կցորդին վիճակին Երևա-նայ, իսկ գաղթականքն Տայոց վիճակին Վրաստանի։

յօդ 57.

ԶԹեմակալ Առաջնորդս Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ՚ի Ռուսաստան նշանակէ ԽՈՐ-ՀՈՒՐԴ ԱՐՔԱՅԻՆ, յԵկեղեցական աստիճանաւորաց այր գտանութեան։ Նոքա կար-գին և արձակին Բարձրագոյն Հրովարտակաւ։ ՚ի մտանել նոցա ՚ի պաշտօն՝ երդնուն վասն հաւատարիմ հպատակութեան և ծառայութեան։

յօդ 58.

Լուսաւորչական Հայոց Արք եպիսկոպոսունք ՚ի Ռուսաստան են լիակատար հոգևոր Առաջ-նորդք այր գտանուն ՚ի վիճակս յանձնեալս նոցա Բարձրագոյն հրամանաւ, և պատասխանատու են կառավարութեան նոցին առաջի Բարձրագոյն Կառավարութեան և առաջի Հոգևոր իշխանութեան իւրեանց։ Նոցա գործակցին ՚ի կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց Հոգևոր Ա-տեանք հաստատեալք յիւրաքանչիւր վիճակի։

Յօդ 59.

Թեմական Առաջնորդք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ՚ի սահմանս վիճակի իւրեանց ձեռնադրեն ՚ի քահանայս աստիճանս հոգևոր կարգի ըստ կարգաւորութեան եկեղեցւոյ իւրեանց, և ըստ զօրութեան կանոնացն՝ որք սահմանեալ են առ այս ՚ի նմա. և նկատեն զի թիւ սրբազանագործ և սպասին եկեղեցական պաշտօնէից մի՛ անցցէ ըստ չափ առանց սահմանեալ հարկի. ՚ի վարդապետութիւն ձեռնադրեն նոքա ոչ այլազգ, բայց եթէ հրամանաւ Պատրիարք կաթողիկոսին Էջմիածնի:

Յօդ 60.

Թեմական Առաջնորդք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ կարեն արձակուրդ տալ ստորադրեալ եկեղեցականաց իւրեանց ոչ աւելի քան զամիս չորս. յաւելեալ երկարաւ արձակուրդ խնդրեն նոքա ՚ի հրամանէ Ծայրագոյն Հոգևոր կառավարութեան իւրեանց՝ որ յաղագս ցանկացողաց ելանել արտաքոյ սահմանի Տէրութեան՝ առաջի առնէ Բարձրագոյն կառավարութեան ըստ հաստատեալ կանոնի:

Յօդ 61.

Լուսաւորչական Հայոց Թեմական Առաջնորդք պարտաւոր են՝ անձամբ տալով օրինակ բարեպաշտութեան և ամենայն քրիստոնէական և քաղաքական առաքինութեանց, ջանադիր լինել զի հովիւք որք ընդ ինքեանց են կախեալ՝ վասն բարեկարգութեան հոգևոր հօտին յանձնելոյ ինքեանց,

Յօդ 62.

Նոքա ուշադրութիւն դնեն ՚ի վերայ ամենայն գործողութեանց Եկեղեցականաց վիճակի իւրեանց, յորդորելով զնոսա յառաքինական կեանս համաձայն վարդապետութեան սրբոյ Աւետարանի:

Յօդ 63.

Լուսաւորչական Հայոց Թեմական Առաջնորդք՝ ջանալով ՚ի հաստատութիւն կանոնաց սրբոյ Աւետարանին և տարածումն բարի վարուց ՚ի մէջ Հայոց եկեղեցւոյ ՚ի նոցա յանձնեալ վիճակս, ՚ի գործ դնեն առ այս զհեզ և զհամաձայն Ճշմարիտ ոգւոյն քրիստոնէութեան եղանակս խրատուց և յորդորանաց: Նոքա պարտաւոր են ըստ կարելւոյն խոյս տալ յայնմ ամենայնէ, որ ունի զգոյն աւելորդ խստութեան:

Յօդ 64.

Թեմական Առաջնորդք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ պարտաւոր են եթէ ոչ իւրաքանչիւր ամի, գոնէ յընթացս երից ամաց անգամ մի յայց ելանել վիճակացն Բարձրագոյն հրամանաւ յանձնելոց ինքեանց. իսկ եթէ բացառելի անհնար իցէ անձամբ լինել զայս պարտաւորութիւն, նոքա յանձնեն զայս այցելութիւն եկեղեցեաց միում յաւուել յարգի հոգևոր աստիճանաւորաց՝ ստորադրելոց ինքեանց՝ տալով նմա խրատս պատկանաւորս ՚ի հրահանգութիւն նորին:

Յօդ 65.

՚Ի ժամանակի այցելութեան վիճակաց նոքա ջանադիր լինին յատկապէս ուղղութեան եկեղե-

ցականաց, վանորէից և եկեղեցեաց, կարծելով զնա՛ անկարգութիւնս զառ 'ի յինքեանց 'ի յայտ բերեալս և 'ի գործ դնելով հնարս առ 'ի զառաջս առնելոյ նորոգման նոցին։

յօդ. 66,

Թեմական Առաջնորդք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ դարձուցանեն նոյնպէս զմիտ մտադրութիւն իւրեանց 'ի վերայ ուղղութեանց դպրատանց եղելոց ընդ տեսչութեամբ վանորէից և եկեղեցեաց՝ որպէս 'ի հասարակի, նոյնպէս և մանաւանդ յելանել նոցա յայցելութիւն վիճակաց, գործակցելով յինքեանց կողմանէ միջոցօք վասն բարեկարգութեան և ծաղկութեան այսոցիկ ուսումնարանաց, նոքա յաւէտ փոյթ կալցեն յաղագս մածանելոյ յայնս զպանծալի և զհեշտընկալ եղանակս ուսումնատուութեան, և յաղագս պահպանելոյ զբարի վարս յուսուցանողս և յուսանելիս միանգամայն։

յօդ. 67,

Թեմական Առաջնորդք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ յայց ելանելն վիճակաց վերահասու լինին ամբողջութեան գոյից ընդ տեսչութեամբ իւրեանց եղեալ եկեղեցեաց և վանորէից։

յօդ. 68,

Թեմական Առաջնորդք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ զկնի այցելութեան ինքեանց հաւատացեալ վիճակաց՝ առաջի առնեն Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Էջմիածնի զմանրամասն համար ամ. գործոց իւրեանց։

յօդ. 69,

'Ի վախճան ամի Թեմական Առաջնորդք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ առաջի առնեն Հայոց Լուսաւորչական Սինհոդոսին Էջմիածնի զընդհանրական համար յաղագս գործոց վիճակաց իւրեանց։

յօդ. 70,

Իւրաքանչիւր Թեմական Առաջնորդ Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ 'ի մտանել իւրում 'ի պաշտօն՝ առաջի առնէ Սինհոդոսին Էջմիածնի զմիտ ցուցակ ամ. Եկեղեցական գոյից նմա հաւատացեալ վիճակին։

յօդ. 71,

Յետ վախճանի Թեմական Առաջնորդի Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ եթէ մնասցէ նա առանց կտակի, և չունի զօրինաւոր ժառանգս, սեպհական գոյք նորա դառնան յօգուտ Լուսաւորչական Հայոց Եկեղեցեաց այնր վիճակի։ Այս հոգաբարձութիւն յանձնեալ լինի վիճակային հոգևոր Ատենից։

## ԳԼՈՒԽ 5.

## ՅԱՂԱԳՍ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԱՏԵՆԻՑ (կոնսիստորիայից) ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ։

# Ը. ՅԱՂԱԳՍ ՀՈԳԵՒՈՐ ԱՏԵՆԻՑ։

Յօդ. 72.

Յուրաքանչիւրում Լուսաւորչական Հայոց վիճակի գտանի Հոգեւոր Ատեան (Կոնսիստորիա) այսր դատաւորութեան. և բաղկանայ 'ի չորից Անդամոց՝ 'ի վարդապետաց միոյ և յերից Աւագ երիցանց կամ 'ի քահանայից՝ յորում Ատենակալ է Վիճակաւոր Առաջնորդն.

Յօդ. 73.

Անդամք Լուսաւորչական Հայոց Հոգեւոր Ատենից նշանակին 'ի Վիճակաւոր Առաջնորդաց՝ որք պաշտօնութեանց նոցին հաստատեսցին 'ի ատենակալութենէ Լուսաւորչական Հայոց Սինոդոսին Էջմիածնի.

Յօդ. 74.

Պաշտօնեայք Լուսաւորչական Հայոց Վիճակային Հոգեւոր Ատենից բաղկանան յԱտենադպրէ, 'ի Թարգմանէ, յԵնթակալաւորէ՝ որ կատարէ միանգամայն և զպաշտօն գանձապետի, և յԱրխիւապետէ և 'ի հարկաւոր թուոյ գրագրաց: Ատենին Ատենադպիրը կարգին ընտրութեամբ Հոգեւոր Ատենին և հաստատութեամբ Վիճակաւոր Առաջնորդին: Ատենադպիրն և Ենթակալաւորն համարին 'ի տասներորդում Կարգի. իսկ Թարգմանն յերկոտասաներորդում՝ ցորչափ գտանին նոքա յայսպիսի պաշտօնս, և եթէ չունին ըստ նախկին ծառայութեան կամ ըստ պաշտաման զայլ բարձրագոյն աստիճան:

Յօդ. 75.

Անդամք Լուսաւորչական Հայոց Վիճակային Հոգեւոր Ատենից և Ատենադպիրք Դիւանատանց նոյն 'ի մտանելն 'ի պաշտօն իւրեանց՝ ըստ հաստատելոյ կանոնի երդնուն վասն հաւատարմութեան ծառայելոյ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՆ. և խղճութեամբ կատարելոյ զպարտաւորութիւնս իւրեանց.

Յօդ. 76.

'Ի քննութիւնս և յընթացս գործոց Լուսաւորչական Հայոց Հոգեւոր Ատենից պահպանի Կարգն սահմանեալ վասն Լուսաւորչական Հայոց Սինոդոսին Էջմիածնի:

Յօդ. 77.

Առ պարագայս գործողութեան վիճակային Հոգեւոր Ատենից Լուսաւորչական Հայոց Եկեղեցեաց՝ վերաբերին:

1. Անմիջական տեսչութիւն 'ի վերայ ստորադրելոյ նոցին Սրբավայրաց և այլոց Եկեղեցական պաշտօնէից՝ սահմանելոց և կուսակրօնից:
2. Հոգաբարձութիւն զբարեկարգութենէ Հոգեւոր Դպրոցաց, Վանորէից, Եկեղեցեաց և Աղքատանոցաց շինուածոց 'ի նմին վիճակի եղելոց:
3. Խնամակալութիւն որբոց և այրեաց Եկեղեցական պաշտօնէից.
4. Մատակարարութիւն կայից եւ ստորադրելոյ նոցին Վանորէից և Եկեղեցեաց.
5. Քննութիւն և վճռումն գործոց ըստ գանգատանաց ստորադրելոց նոցա Եկեղեցեաց և ըստ վէճից նոցին ընդ իրեարս.
6. Քննութիւն և վճռումն գործոց որ վասն պսակաց, բայց միայն առ առաջիկայն 'ի վերա-

հասութիւն Լուսաւորչական Հայոց Սինհոդական Ժողովոյն զոր երկրայական ընդդատածոց 'ի մասին ամուսնական գործոց .

7, Իշխանութիւն ժողովելոյ զկամաւոր նուէրս յօգուտ ստորագրելոց նմա Լուսաւորչական Հայոց վանորէից, Եկեղեցեաց, դպրոցաց և Ողորմածաց շինուածոց, բայց միայն 'ի սահմանս իւրոց վիճակին .

8 . Իշխանութիւն տալոյ անձանց բնակելոյ 'ի վանորայս որք ունին զխնամս առ այն (տես յօդ" 94, եր") .

9, Հաստատել զանդամս 'ի հոգևոր և 'ի վանքական կառավարութիւնս .

10, Պաշտօնակել զդպիրս 'ի Լուսաւորչական Հայոց Եկեղեցիս .

11, Առաջի առնել Հայոց Լուսաւորչական Սինհոդոսին Ժողովոյն յաղագս թոյլ տալոյ ումեք ընկալնուլ զհոգևորական աստիճան, կամ յաղագս մերկանալոյ զայն .

12, Իշխանութիւն կառուցանելոյ զՈղորմածաց շինուածս և առաջարկութիւն առ Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Ժողովոյն յաղագս շինելոյ զնոր վանորայս, զեկեղեցիս և զդպրոցս .

13, Ունել զձեռս ցուցակս թուոյ վանորէից, Եկեղեցեաց, դպրոցաց և Ողորմածաց շինուածոց, թուոյ կուսանաց և ամուսնացեալ Եկեղեցականաց և թուոյ ժողովրդոց իւրաքանչիւր Եկեղեցւոյ, և նոյնոյ 'ի դպրոցս Նոցին ուսուցչաց, աշակերտաց և խնամակալացն .

14, Առաջարկել առ Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Ժողովոյն ամի ամի զվանորական տեղեկութիւնս զվիճակէ իւրեանց ստորագրեալ վանորէից, Եկեղեցեաց, դպրոցաց և Ողորմածաց շինուածոց, ըստ որում համար զկառավարութենէ Եկեղեցական կալուց, և զցուցակ ծառայութեանց ընդհանրապէս նմ Արքեպիսկոպոսի և այլոց Եկեղեցական պաշտօնէից իւրեանց վիճակի .

15, Ընծայել տեղեկութիւն նմ առ Անձն եղեալ գործոց և հաղորդեցելոց եղելոյ 'ի Հոգևոր Ատեանս և որ ինչ ցուցանի 'ի տեղեկութեանս առել՝ գրել յօրագրութեան .

## Բ. ՅԱՂԱԳՍ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ.

յօդ" 78.

Հոգևոր կառավարութիւնք՝ որ 'ի վիճակս ինչ Լուսաւորչական Հայոց Արքեպիսկոպոսաց՝ բաղկանան յերից անդամոց՝ 'ի վարդապետէ կամ յԱբեղայ քահանայէ իբր 'ի նախագահէ, և յերկուց քահանայից : Գրաւոր գործք յայսպիսի կառավարութիւնս յանձնեալ 'ի դպրապետ՝ որ համարի յԱրքեպիսկոպոսարանական կարգի .

յօդ" 79.

Ընդամէն Լուսաւորչական Հայոց Հոգևոր կառավարութեանց նշանակին 'ի Թեմական Առաջնորդէն . Դպրագիրք ընտրին և կարգին 'ի նոյն կառավարութեանց ; 'ի մտանելն 'ի պաշտօն ամենեքին նոքա երդնուն առ հաւատարիմ ծառայութիւն .

յօդ" 80.

Հոգևոր կառավարութիւնք Լուսաւորչական Հայոց եկեղեցեաց ստորագրեալ են վիճակային Հոգևոր Ատենից ըստ դաւանութեան, և ոչինչ կարեն կատարել առանց յատուկ առ այն յանձնարարութեան Հոգևոր Ատենից .

Յօդ 81.

Լուսաւորչական Հայոց Հոգևոր կառավարութիւնք ժողովեն 'ի ստորադրեալ իւրեանց եկեղեցեաց զամ հարկաւոր տեղեկութիւնս վասն Հոգևոր Ատենից այսր դաւանութեան. առաջի ածեն նոցա զխնդիրս մատուցեալս 'ի մասնաւոր անձանց և զպատկանեալս քննութեան Հոգևոր Ատենից՝ հանդերձ իւրեանց եզրակացութեամբ, և տան վկայութիւն զհամարերական քաղուածոցն, այսինքն ծնելոց, մեռելոց, պսակելոց և այլն.

Յօդ 82.

'Ի լրանալ ամին՝ Լուսաւորչական Հայոց կառավարութիւնք առաջի առնեն Հոգևոր Ատենից այսր դաւանութեան՝ որում ստորադրեալ են, զհաշիւ գործողութեանցն իւրեանց. եդեալ 'ի միասին և զտեղեկութիւնս եկեղեցականաց, զթուոց Եկեղեցեաց, զժողովրդոց, զծնելոց, զմեռելոց և զպսակելոց. նոյնպէս և զհաշիւ ծախ ստացուածոց եկեղեցեաց ընդ իշխանութեամբ նոցին եղելոց.

# ԳԼՈՒԽ 6.

## ՅԱՂԱԳՍ ՄԻԱՆԱՍՏԱՆԱՑ.

Յօդ 83.

Ամենայն մենաստանք Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ արական սեռի, նոյնպէս և կուսանաց ըստ զօրութեան վերոյիշեալ սահմանադրութեանց այս եկեղեցւոյ՝ վարին կանոնօք սրբոյն Բարսղի Մեծի.

Յօդ 84.

Ընկալմանն 'ի կրօնաւորութիւն նախորդեալ լինի փորձն ուխտապահութեան՝ որ կատարի ըստ կարգին սահմանելոյ առ այս կանոնադրութեամբ Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ. Թիւ ուխտադրացն երկոցուն սեռի չէ՝ պարտ զանցանել քան զսահմանեալ թիւն եղբարց կամ կուսանաց 'ի նմին մենաստանի.

Յօդ 85.

Ոչ ոք կարէ նուիրել զանձն 'ի կրօնաւորութիւն առանց հրամանի Լուսաւորչական Հայոց Սինոդոսին Էջմիածնի ըստ առաջարկութեան Թեմական Առաջնորդին.

Յօդ 86.

Ցանկացօղքն նուիրել զանձինս 'ի կրօնաւորութիւն՝ պարտին լինել երեսուն ամաց և ոչ պակաս. բացառաբար յայսմանէ կարեն թոյլատրիլ՝ ոչ այլազգ, բայց եթէ ըստ յատուկ արժանաւոր պատճառանաց՝ ըստ զօրութեան կանոնաց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ. բայց սակայն ոչ արգելեալ լինի մտանել 'ի վանս վասն փորձոյ ուխտապահութեան՝ կանխագոյն քան զերեսուն ամն հասակի.

Յօդ 87.

Առ մտանելոյ 'ի վանականութիւն և ընդունելոյ զփորձ ուխտադրութեան, կարևոր է նախ համաձայնութիւն այնոցիկ անձանց կամ տեղեաց, որոց ներքոյ են ցանկացողքն վանականութեան. Հոր

կատա անձինք ոչ կարեն մտանել 'ի վանականութիւն, բայց եթէ հրամանաւ կառավարիչ Սինկղիտոսին (սինոդին)

## յօդ" 88.

Ամուսնացեալ անձանց թոյլատրի մտանել 'ի վանականութիւն յայնժամ միայն, յորժամ չունին նոքա անչափահաս զաւակունս, և երկոքեան ամուսինք յանկան ընդունել կրօնաւորութիւն.

## յօդ" 89.

Մտանողքն 'ի վանականութիւն հրաժարին միանգամայն և 'ի տիրելոյ անշարժ կալից իւրեանց, և վասն նորին ոչինչ նորոգ անշարժ սեպհականութիւն կարեն ստանալ. բայց ոչ արգելեալ լինի նոցա՝ գնել զայնս յօգուտ եկեղեցեաց և վանորէից այնոցիկ՝ յորս են ինքեանք. Իսկ եթէ ստացուածական կալք հասցեն կրօնաւորի ումեք ըստ իրաւանց ժառանգութեան, պարտաւոր է նա տալ կամ վաճառել զայնս 'ի միջոցի վեց ամսոց.

## յօդ" 90.

Վանականաց արգելեալ է տուրևառութիւն իմն վաճառաց, բաց 'ի վաճառելոյ սեպհական ձեռագործս իւրեանց, և այն ոչ այլապէս, բայց եթէ հրամանաւ կառավարութեան իւրեանց.

## յօդ" 91.

Ամ շարժական կայք թողեալք զկնի մահուան վանականին՝ պատկանին մենաստանի նորին, եթէ չիցէ նորա արարեալ կտակ և չունիցի օրինաւոր ժառանգ.

## յօդ" 92.

Կրօնաւորելոցն՝ որոց ըստ զօրութեան կանոնադրութեան Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ներեալ լինի մերկանալ յինքեանց զկոչումն. 'ի դառնալ նոցա 'ի քաղաքական վիճակ, թոյլատրի վայելել միայն յիրաւունս պատշաճեալս տոհմի և ծագման վիճակի իւրեանց, առանց դարձուցանելոյ առ նոսա զայնոսիկ առանձնաշնորհութիւնս, զաստիճանս և զպատուանշանս՝ զորս նոքա ստացեալ են ցմտանելն 'ի վանականութիւն. նոյնպէս և զկայս՝ թէ զայնս որք հասեալ էին նոցա ժառանգութեամբ, և թէ զայնս՝ զորս վաստակովք իւրեանց 'ի ձեռս բերեալ էին նախքան զմտանելն 'ի կրօնաւորութիւն.

## յօդ" 93.

Յիւրաքանչիւր մենաստանի պարտի լինել միայն սահմանեալ թիւ կրօնաւորեալ անձանց, և յամ դէպս ոչ սակաւ քան զութն անձինս աբեղայից կամ կուսանաց։ իսկ վասն մենաստանացն այնոցիկ՝ յորս չէ որոշեալ այս թիւ, Հայոց Լուսաւորչական Սինոդոսն Էջմիածնի ըստ առաջարկութեան վիճակային իշխանութեան կարգեսցէ համեմատ եկամտից նոցին զթիւ յայսմ մասին կանոնս.

## յօդ" 94.

Ի Լուսաւորչական Հայոց մենաստանս բաց 'ի սահմանեալ թուոյ կրօնաւորելոցն և ունկնդրաց արական կամ իգական սեռի՝ կարեն բնակել ըստ հրամանի վիճակային իշխանութեան՝ 'ի վանօրայս արականացն, զառամեալ և անօգնական որբագործ և [illegible] եկեղեցական պաշտօնեայք

5335-56

Гос. Библиотека ZUUՌ-Арм.ССР им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվան

առ 'ի ունիլ ընտանիս և զանդորրութիւն, և որդիք աղքատ երկրագործի կ. ստորին եկեղեցական պաշտօնէից, մանաւանդ որք՝ որք կրթեալ իցեն 'ի սպասաւորութիւն եկեղեցւոյ։ Իսկ 'ի վանորայս իգականացն 'ի ծերութիւն [illegible] անօգնական այրիք և աղջկունք հոգևորական կոչման, և դեռահաս որբք իգական սեռի 'ի կրթութիւն և յուսումն արուեստի ձեռագործութե։

յօդ. 95.

Լուսաւորչական Հայոց Մենաստանք կախեալ կան անմիջաբար և կատարելապէս զվիճակային իշխանութէ այսր գաւառութեան, և պարտաւոր են 'ի [illegible] տալ նմա զմանրամասն համար ամ. գործառնութեանց իւրեանց։ [illegible] զվանական իշխանութենէ Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ մատուցանեն թեմական Սրբ. եպիսկոպոսին այսր գաւառութեան։

յօդ. 96.

Ժողովումն կամաւոր նուիրմանց յօգուտ Մենաստանաց լինի յայնմիկ վիճակի, ուր գտանի Մենաստան. և ոչ այլուր, բայց եթէ [illegible] նուագս խնդրելով յատկապէս հրաման 'ի վիճակային իշխանութենէ. իսկ յայլ Լուսաւորչական Հայոց վիճակս [illegible], հրամանաւ Լուսաւորչական Հայոց Սինոդոսին Էջմիածնի ըստ առաջարկութեան վիճակային իշխանութեան. յամ. դիպուածս այսպիսի ժողովարարութիւնք յառաջանան ոչ այլուր, բայց եթէ թոյլտուութեամբ և քաղաքական իշխանութեան տեղւոյն։

յօդ. 97.

Լուսաւորչական Հայոց Մենաստանք կառավարին՝ արականացն 'ի վանահայր վարդապետաց կամ Աբբայից, իգականացն 'ի մայրապետաց կամ Աբբաուհեաց. թէ նոքա և թէ սոքա կարգին 'ի վիճակային իշխանութէ հաստատութ. Պատրիարգին Էջմիածնի։

յօդ. 98.

Վանահարք և մայրապետք Լուսաւորչական Հայոց Մենաստանաց կառավարեն զգործս նոցին ոչ այլուր, բայց եթէ գործակցութ. կառավարութեանց վանորէից այսր գաւառութե, բաղկացելոց ընդ նախագահութ. վանահարց կամ մայրապետաց յերկուց աւագագոյն նախապատիւ վանականաց կամ կուսանաց՝ որք հաստատին ըստ առաջարկութ. վանահօր կամ մայրապետին 'ի վիճակային իշխանութէ։

յօդ. 99.

Վանահարք կամ մայրապետք Լուսաւորչական Հայոց Մենաստանաց 'ի միասին ընդ վանական կառավարութեանց այսր գաւառութեան նկատեն զի ճշտիւ կատարեսցին եկեղեցական կանոնք և կարգաւորութիւնք 'ի Մենաստանս իւրեանց։ Պահպանեն նոքա յանփոփոխութեան զշարժական և զանշարժ կայս Մենաստանին, և պատասխանատու լինին [illegible] եկամտից՝ և ընդհանրապէս զբարեկարգութ. 'ի նոսա յանձնեալ Մենաստանին։

յօդ. 100.

[illegible] Մենաստանական եկամտից և ծախուց՝ Լուսաւորչական Հայոց վանական կառավարութիւնք պահպանեն [illegible] հաշիւս՝ զոր 'ի միասին ընդ ցուցակաց ամ. շարժական և անշարժ մենաստանական գոյից առաքեն [illegible] 'ի վերահասութիւն վիճակային իշխանութեան։

Յօդ. 101։

Ի մեռանել կամ 'ի փոխել վանահօր կամ մայրապետին Լուսաւորչական Հայոց վանքական կառավարութիւնք գործակցութեամբ ումանց յերիցագոյն և 'ի նախապատիւ վանականաց կամ կուսանաց առնեն զվանորայման ցուցակ գոյից վանացն, և առաջի առնեն զայն վիճակային իշխանութեանն. ըստ այսմ առաժամի նոր վանահայրն կամ մայրապետն 'ի մտանել իւրում 'ի պաշտօն՝ ընդունի զմենաստանն։

## ԳԼՈՒԽ Է։

## ՅԱՂԱԳՍ ՍՊԱՍԱՒՈՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ։

Յօդ. 102։

Սպասաւոր Եկեղեցականք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ են նախ՝ Սուրբ Երիցունք, քահանայք, Սուրբ սարկաւագունք, Արկաւագունք և կիսասարկաւագունք. Երկրորդ՝ Դպիրք կամ ստորին Եկեղեցական պաշտօնեայք։

Յօդ. 103։

Ի կոչումն սպասաւոր Եկեղեցականաց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ կարեն մտանել՝ հրամանաւ Լուսաւորչական Հայոց Սինոդոսին Էջմիածնի ըստ առաջարկութեան վիճակային իշխանութեանն այսր դասանութեան, ընդհանրապէս անձինք յամ վիճակի ըստ նախընթաց համաձայնութեան այնոցիկ անձանց և ուղեաց զորոց ունին նոքա վկայութիւն. հարկաւոր անձինք ոչ այլազգ անցանեն 'ի հոգևոր կոչումն, բայց եթէ հրամանաւ Կառավարիչ Սենատին։

Յօդ. 104։

Սրբազնագործ պաշտօնեայք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ըստ վարելի կանոնադրութե նորին նշանակին 'ի պաշտօն և նուիրին 'ի հոգևոր Կարգ 'ի իշխանակալ Առաջնորդաց այսր դասանութեան, և 'ի նոցունց ձեռնադրին. Դպիրք կամ ստորին Եկեղեցական պաշտօնեայք կարգին 'ի պաշտօն ըստ տնօրէնութեան վիճակային իշխանութեան, և օրհնութեամբ քահանայի Եկեղեցւոյն 'ի նոյն վերոգրին։

Յօդ. 105

Սպասաւոր Եկեղեցականք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ որոց գլխաւորաբար յանձնեալ է կատարել զԱստուածային պաշտամունս 'ի ժողովրդապետական Եկեղեցիս, և վճարել զհոգևոր պէտս աշխարհականաց. 'ի կատարել զայսպիսի գերագոյն պարտաւորութիւնս պարտուպատշաճ ջանասիրութեամբ և խղճութեամբ՝ յամ դէպս պարտական են ջանալ հաստատել զժողովուրդս իւրեանց 'ի Ճշմարտութեան քրիստոնէական վարդապետութե, խրատելով և յորդորելով զնոսա առ բարեպաշտ, համեստ և պատուաւոր կենցաղավարութի՝ ոչ միայն յորդորանօք, այլև օրինակաւ անձին, և ջանալով խոյս տալ յամ՝ որինչ կարէ տալ պատճառս մեղադրութեան նոցա 'ի դատարկութեան իւրեանց 'ի թեթևամտութեան կամ յանժուժկալութեան։

Յօդ. 106։

Սպասաւոր Եկեղեցական անձանց Լուսաւորչական Հայոց թոյլատրի ունել անշարժ կայք

ըստ հաստատեալ կանոնաց վասն մնացեալ անձանց, բայց 'ի ձեռս բերել զգոյս աշխարհականաց սեպհական՝ կարեն միայն այնք 'ի նոցանէ՝ որք ըստ ծագման ազգատոհմութեան իւրեանց ժառանգութեամբ ունին յազնուականութենէ.

յօդ. 107

Տունք պատկանեալք ամուսնացեալ հոգևորականաց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ յորս բնակին նոքեանք, ազատ են ('ի բնակութենէ զինուորական ծառայողաց)('ի Պոստոյ) 'ի քաղաքահարկէ, և յայլ քաղաքական հարկաց՝ բաց 'ի նորոգութենէ սալայատակաց և 'ի պահպանութենէ մաքրութեան 'ի փողոցս և 'ի գիշերի հաւասար ընդ այլ բնակիչս.

յօդ. 108.

Ամուսնացեալ Հոգևորականք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ 'ի ձեռն օրինաւոր ամուսնութեան հաղորդեն զիրաւունս վիճակի իւրեանց՝ և կանանց իւրեանց՝ որք զնոյն իրաւունս պահպանեն զկնի մահուան ամուսնոց իւրեանց, եթէ ոչ փոխեսցեն յայնցանէ ըստ դատաստանական վճռոյ, և ոչ անցցեն 'ի նորոգ ամուսնութիւն ընդ անձին այլոյ վիճակի.

յօդ. 109.

Զաւակք Արքեպիսկոպոսի և սորին եկեղեցական պաշտօնէից Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ վերաբերին առ եկեղեցական իշխանութիւն և չպարտաւորին ընտրել զայլ եղանակ կենաց։ Յորժամ որդիք Արքեպիսկոպոսի պաշտօնէից մտանեն 'ի զինուորական ծառայութիւն, վայելեն նոքա յիրաւունս իրնական զինուորաց (փրիւիլեգիրովաննըյ) միայն թէ աւարտեալ իցեն զուսմունս գոնեայ 'ի միջին դասատան դպրոցաց, կամ յայլ նոյն հաւասար վարժարանս. բայց սակայն այս ամ ոչ տարածի առ որդիս ծնեալս յառաջ քան զձեռնադրել հարցն 'ի հոգևոր կոչումն. Այսք մնան յառաջին կոչման իւրեանց և 'ի հարկատուութեան և ոչ համարին ընդ եկեղեցական իշխանութեամբ.

յօդ. 110.

Ամուսնացեալ եկեղեցականք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ըստ ցանկութեան իւրեանց կարեն արձակիլ 'ի հոգևոր իշխանութենէ՝ սակայն ոչ այլապէս, բայց եթէ հրամանաւ Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Էջմիածնի՝ ըստ առաջարկութեան վիճակային իշխանութեանն, եթէ չեն նոքա յազնուականաց, զկնի արձակմանն՝ պարտին ընտրել նոքեանց զեղանակ կենաց ըստ հաստատեալ օրինաց.

յօդ. 111.

Արքեպիսկոպոսի պաշտօնեայք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ կախին անմիջապէս 'ի վիճակային իշխանութենէ այսր գաւառութեան; իսկ սորին Եկեղեցական պաշտօնեայք [illegible] երիցագոյն քահանայէ Եկեղեցւոյն. ամ գանգատք զԱրքեպիսկոպոսէ և սորին Եկեղեցական պաշտօնէից մատուցանին առ վիճակային իշխանութիւնն.

## ԳԼՈՒԽ 8.

## ՅԱՂԱԳՍ [illegible] ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ.

յօդ. 112.

Առ 'ի կրթութիւն մանկանց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ [illegible] քննութիւն՝ հաս

տարին ՚ի վերայ Էջմիածնի և Կառավարիչք Լուսաւորչական Հայոց վիճակաց Ռուսաստանի հոգևոր դպրոցք։

Յօդ. 113.

Հոգևոր դպրոցն՝ որ ՚ի վերայ Էջմիածնի, կայ ընդ անմիջական տեսչութեամբ Լուսաւորչական Հայոց Պատրիարք Կաթուղիկոսին. իսկ այլ միւս դպրոցք կախին զվիճակային իշխանութեանց։

Յօդ. 114.

Իշխանութիւնք Լուսաւորչական Հայոց դպրոցաց՝ որոց յանձնի կրթական և բարոյական կրթութիւն մանկանց ՚ի նոսին ուսանողաց, պարտաւոր են ընդ վերատեսչութեամբ և առաջնորդութեամբ թեմակալ Սրբ. եպիսկոպոսաց համեմատ միջոցաց առաջի եդելոց պատրաստել զհնարաւոր կանոնս վարուց սահմանելոյ զընթացս ուսման և զիւր նորին կարգադրութիւն դպրոցաց առ ՚ի առաջի առնել Լուսաւորչական Հայոց Սինոդոսին Էջմիածնի։ Սինոդոսն զնոյն հաստատելոյ և հրամանելոյ այսպէս կանոնաց առաջի առնէ զայնս հանդերձ կարծեաւ վասն դպրոցին Էջմիածնի կարգել կանոնադրութեամբք. Նախարարութեան նորին գործոց ՚ի ձեռն գլխաւոր կառավարչին վրաստանի, կովկասեան և յայնկոյս կովկասու երկրաց նահանգաց. ՚ի թիւս առարկայից՝ որք մտանեն ՚ի հրամանս ուսման Լուսաւորչական Հայոց դպրոցաց բաց ՚ի հասարակաց արհեստից, և յայնց՝ որք առաւել կարևորք են հոգևորական կոչման՝ պարտին լինել լեզու Ռուսաց և պատմութիւն և աշխարհագրութիւն ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ Ռուսաց։

Յօդ. 115.

Յամ եկեղեցիս և ՚ի մենաստանս վիճակին՝ յորում է դպրոցն, լինի լոյս տօնական կարգի ժողով դրամոց յօգուտ նորին, և ժողովեալ դրամքն կառավարիչք երես ամիս առաջին ՚ի ժողով դրամոց յօգուտ նորին, և ժողովեալ դրամքն կառավարիչ երես ամիս առաջին ՚ի հանդիսադրեալ այն վիճակի, առ ՚ի տուեցանելոյ ՚ի դպրոցն. բաց յայսմանէ մենաստանք նախանձաւորք լինելով առ օգուտ Լուսաւորչական Հայոց եկեղեցեաց՝ ամի ամի յընկալելոց իւրեանց նուէր լինելով առ օգուտ Լուսաւորչական Հայոց եկեղեցեաց՝ ամի ամի յընկալելոց իւրեանց նուիրեն զառանձին գումար ՚ի կառավարութիւն վիճակային դպրոցաց իւրեանց։

Յօդ. 116.

Հոգևոր դպրոցք Լուսաւորչական Հայոց եկեղեցեաց պարտաւոր են ՚ի վախճան ամի առաջի առնել վիճակային իշխանութեան զհնարաւոր համար գործառութեանց իւրեանց, և զտեղեկութիւն ընկալելոց և ծախուց իւրեանց և զմնացորդ գումարացն դրամոց։

## ԳԼՈՒԽ Թ.

## ՅԱՂԱԳՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՅԻՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՀԱՅՈՑ։

Յօդ. 117.

Կառավարիչք շարժական կամ անշարժ ստացուած նախադասականեալ ՚ի պատկանութեան մ և իցէ Լուսաւորչական Հայոց Մենաստանի կամ եկեղեցւոյ կամ նոցին վերաբերեալ Տնահանից շինուածոյ՝ համարին ընդ հանուր ստացուած ազգային լուսաւորչական եկեղեցեացն Հայոց։

Յօդ. 118.

Ուր և իցէ ժողովք դրամոց և նախնեաց թոյլատրելովք ցարդ ըստ փոխելի աւելորդութեանց յօդուա Լուսաւորչական Հայոց եկեղեցեաց՝ թոյլատրին և յանձնեսցին յայն վիճակի՝ յորում են եկեղեցիքն այնոքիկ։ Ժողովարարութիւնք առ այս նպատակ յայլ վիճակս Լուսաւորչական Հայոց թոյլատրին ոչ այլազգ, բայց եթէ հրամանաւ ծայրագոյն Հոգևոր իշխանութեանն այսր դաւանութեան ըստ կարգին սահմանելոյ 'ի 96. երրորդ յօդուածն՝ որ յաղագս ժողովարարութեանց յօդուա մնացականաց։ Ներկայն յայտնիկ դիպուածս հարկաւոր է թոյլատուութիւն տեղական մարմնաւոր կառավարութեան։

Յօդ. 119.

Եկեղեցական գլուխք դրամոց տուեալ լինին առ աճումն 'ի ձեռն տոկոսեաց 'ի թագաւորական կամ 'ի հասարակաց գանձարանս. Տոկոսութիւն այսոցիկ դրամոց 'ի ձեռս մասնաւոր անձանց թոյլատրի միայն հրամանաւ Լուսաւորչական Հայոց վիճակային իշխանութեանն. և կայ ընդ պատասխանատուութեամբ նորին։ Եթէ այս տոկոսութիւն համարեսցի յարմարաւոր և շահաւէտ վասն եկեղեցւոյ, և եթէ այսու կերպիւ հաստատեսցի գումարն ապահովեալ իցէ հաստատուն գրաւականաւ։

Յօդ. 120.

Իւրաքանչիւր Լուսաւորչական Հայոց եկեղեցի պարտին լինել ճիշտ և մանրամասն ցուցակ ամ եկեղեցական անշարժ կայից, անօթոց և այլոց իրաց և դրամոց. նոյնպէս և ամ եկամտից պատահելոց որ և իցէ իրաւամբք նոյն եկեղեցեաց. եւս և օրինաւոր ժապաւենիւ մատեան վասն մուծանելոյ 'ի նոյն զամ եկամուտս և զծախս դրամոց եկեղեցւոյն։

Յօդ. 121.

Կառավարութիւն ստացուածոց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց կախի անընդմիջապէս զերեցփոխանց կամ զեկեղեցպանաց իւրաքանչիւր եկեղեցւոյ եղելոց։

Յօդ. 122.

Երեցփոխանք կամ եկեղեցպանք եկեղեցւոյն ընտրի եռամեայ ժամանակաւ 'ի պատուաւորագունիցն 'ի ժողովրդեանն, 'ի լրանալ երից ամացն կարէ նա 'ի նորոյ ընտրիլ յայս պաշտօն։

Յօդ. 123.

Նոր եկեղեցպանն կամ երեցփոխանն 'ի մտանել իւր 'ի պաշտօն պարտաւոր է հաւաստի լինել անթերութեան եկեղեցական գոյից և ընդունել զայնս 'ի նախորդէն իւրմէ ըստ զօրութեան հարիւր քսաներորդ յօդուածոյն։

Յօդ. 124.

Վերահասութիւն անթերութեան եկեղեցական կայից՝ կառավարութիւն եկամտից եկեղեցւոյ, երթևեկութիւն գործոց 'ի պատշաճաւոր դատարանս վասն նորին, շինութիւն և նորոգութիւն եկեղեցական տանց, տեսչութիւն այնոցիկ 'ի վարձու, և ամ այնպիսիք մտանեն 'ի պարագայս պարտաւորութեանց եկեղեցպանին կամ երեցփոխանին։ Նա ընդհանրապէս կատարէ զպաշտօն իւր իբրև լիակատար գործակալ 'ի կողմանէ ժողովրդեանն. իսկ յերևելի գործս իրաւունս ունի պահանջելոյ 'ի հասարակութենէ զատ անձինս թուղթ հաւատարմութեան 'ի ներկայութեան որոց կարելին է բազմաւոր ժողովրդականաց. ընկալեալ զայս թուղթ հաւատարմութեան նա ըստ այնց գործոյն՝ որք յանուանէ

յանձնեցեալ են նմա 'ի մէջ ժողովոյն, զի եթէ չիք պատասխանատու է առաջի հասարակութեան ։

յօդ. 125.

Ի լրանալ ամի եկեղեցպանն կամ երեցփոխանն պարտաւոր է առաջի ընդհանուր ժողովոյն հասարակութեան տալ զլիակատար հաշիւ ամ գործողութեանց իւրոց 'ի մասին կառավարութեան տնտեսական գործոց եկեղեցւոյն և մանաւանդ 'ի մասին գանձանակացն սահմանելոց յառանձին արկեղ, և ապա առաջի տանէ՝ զայս հաշիւ իւր լուսաւորչական Հայոց վիճակային կոնսիստորիայն՝ որում և պատկանի ։

յօդ. 126.

Եկեղեցպանն կամ երեցփոխանն որ առաւելութեամբ անհոգացեալ է զինչս գումար եկեղեցւոյն՝ յորում է ինքն, և կամ կատարեալ է զայս պաշտօն զամս երիս անընդհատ, առ կատարեալ բաւականութիւն իւրումն կառավարութեան ստանայ այնու զիրաւունս, զի ընդ առաջարկութիւն 'ի վարձատրութիւն նորին ըստ հաստատեալ կարգին ։

# ԳԼՈՒԽ Ժ.

## ՅԱՂԱԳՍ ՊԱՐԳԵՒԱՑ ԱՐԺԱՆԱՒՈՐԱՑ ԵՒ ԱՏՈՐԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԵՒ ՅԱՂԱԳՍ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՅՐԵԱՑ ԵՒ ՈՐԲՈՑ ՆՈՑԻՆ ։

յօդ. 127.

Արժանաւորք և ատորին եկեղեցական պաշտօնեայք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ կառավարին ըստ ժողովրդոց իւրեանց ։

յօդ. 128.

Երեք տեսակք պարգևաց կարեն լինել Արժանաւորաց և ատորին Եկեղեցական պաշտօնէից. Նախ, հաստատեալն և սահմանեալն վասն նոցա 'ի ժողովրդենէ 'ի մասանցն նոցա 'ի պաշտօն. Երկրորդ, տուրքն՝ զոր ստանան նոքա վասն կատարելոյ զհոգևոր պէտս. Երրորդ, կամաւոր նուէրք ։

յօդ. 129.

Տուրք վասն կատարելոյ զհոգևոր պէտս նշանակին 'ի հետևեալսդ. վասն փարատելոյ զտան նորածնի՝ տասն կոպէկ արծաթի. վասն մկրտութեան երեխայի՝ քսան կոպէկ արծաթի. վասն պսակի՝ քառասուն կոպէկ արծաթի. վասն թաղման չափահաս անձանց՝ քառասուն կոպէկ արծաթի, և տղայոց՝ քսան կոպէկ արծաթի. 'ի կատարելն զկարգս օրհնութեան պսակման, կամ խոստովանութեան, և հաղորդութեան ոչ ինչ խնդրեսցի ըստ կարգին տուրք ինչ. խստիւ արգելեալ լինի արժանաւորաց և ատորին Եկեղեցական պաշտօնէից Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ պահանջել որպէս և եթէ պատճառանօք զտուրս աւելի քան զսահմանեալս յայսմ յօդուածի վասն կատարելոյ զհոգևոր պէտս ։

Յօդ՛ 130

Արքեպիսկոպոսն եւ սոցին Եկեղեցական պաշտօնեայք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ չու֊նին իրաւունս վասն չկծարելոյ առ նոսա զսուրան պատկանեալս ինքեանց ըստ զօրութ հայեր քսան եւ եննէրորդ յօդուածոյն այսր կանոնադրութեան՝ հրաժարել 'ի կատարելոյ զարքեպիսկոպ֊ ծառայութիւնս եւ կամ յանձնառու լինել զայն. Նոքա կարեն միայն խնդրել 'ի Հոգևոր Ատենէ առ 'ի պահանջել զայնոսիկ սուրս 'ի ձեռն մարմնաւոր իշխանութեան.

Յօդ՛ 131.

Ամսական ռոճիքն վասն կատարելոյ պաշտօն պէտս՝ բաժանին 'ի մէջ Արքեպիսկոպոսի եւ սոցին Եկեղեցական պաշտօնէից Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ համաձայն կարգին՝ որ կայ ցայսօր.

Յօդ՛ 132.

Յաղագս խնամակալութեան այրեաց եւ որբոց Արքեպիսկոպոսի եւ սոցին Եկեղեցական պաշտօ֊նէից Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ կարգին ամենայն առկելք 'ի վանս Էջմիածնի, եւ յամ Լուսաւորչական Հայոց վիճակս՝ որք են 'ի սահմանս Ռուսաստանի.

Յօդ՛ 133

Այնպէս վասն խնամակալութեան այրեաց եւ որբոց Արքեպիսկոպոսի եւ սոցին Եկեղեցական պաշ֊տօնէից Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ լեւ Էջմիածնայ Սինոդի սահման զգլխաւոր եկամուտս ինքեանց 'ի կանոնաւոր նախկանաց բաժնոր ամենայն. բայց յորժամ եպարքոսները Լու֊սաւորչական Հայոց վիճակային իշխանութեան ամի ամի տայ մասն ըստ մարթելոյ յեկամտից վիճակի իւրոյ յաղագս ավելցնելոյ վասն խնամակալութեան.

Յօդ՛ 134.

Փոխանակ կանոնաւոր նախկանաց վասն արկեղոցն խնամակալութեան այրեաց եւ որբոց Արքեպիս֊կոպոսի եւ սոցին Եկեղեցական պաշտօնէից Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ լինի նախ գան֊ձանակք եկեղեցեաց եպարքոսները Լուսաւորչական Հայոց եկեղեցիս այնր վիճակի՝ որոյ վասն սահմանեալ է արկղն. Եւ երրորդ սատարութեան յամենայն մասանէ սահմանելոյ առ այս.

Յօդ՛ 135.

Առաւելութիւն արկեղոց խնամակալութեան այրեաց եւ որբոց Արքեպիսկոպոսի եւ սոցին Եկեղե֊ցական պաշտօնէից Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ հաստատեալ լինի ամենայն հոգա֊բարձութեան ընդ անմիջական վերատեսչութեամբ վիճակային իշխանութեան. Այս հոգաբար֊ձութիւն բաղկանայ յերից պատուաւորագոյն անդամոց ուխտի ամենայն Եկեղեցականաց վիճակին ընտրութեամբ Թեմական Առաջնորդին, յամենայն կողմանէ նոցա զպարտաւորութիւն գոր֊ծակցելոյ առ հասարակ բարեկար նպաստին պահպանութեան այսց արկեղոց. ո՛չ ինչ վարձ սահման առ այն.

Յօդ՛ 136.

Հոգաբարձութիւնն սահմանէ զամ ժողովելոյ դրամն յօգուտ արկեղաց՝ որք 'ի գանձանակս, նուէ֊րներ եւ լոյս մասանց. եւ ամի զեկուցէ հաշիւ այնոցիկ.

Յօդ. 137.

Հոգաբարձութիւնն նշանակէ այրեաց և որբոց սրբազնագործ և ստորին եկեղեցական պաշտօնէից Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ զօժանդակութիւնս ըստ խոհեմ դիտողութեան՝ բայց ո՛չ շռ-այլաբար, եթէ ոչ յետ խոհութեամբ հասու լինելոյ հարկաւորութեանն առանց անձնական շա-հու և կողմնապահութեան.

Յօդ. 138.

՚Ի նշանակելն զօժանդակութիւն այրեաց և որբոց սրբազնագործ և ստորին եկեղեցական պաշ-տօնէից Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ պարտաւոր է հոգաբարձութիւնն պահպանել զյե-տագայ կանոնս. 1. Ընծայել կարգել զհաստատուն տարեկան օժանդակութիւնս՝ խոյս տալով որչափ ինչ մարթէ, ՚ի տալոյ զայլևայլ նուագաց օժանդակութիւնս ՚ի միանուագ. 2. Զայլևայլ նուագաց օգնութիւնս տալ մի և նոյն անձին ոչ աւելի քան զմիանգամ յամին. 3. Նշանակել զնպաստս առաւելապէս. նախ այնց այրեաց և որբոց՝ որք ՚ի կատարեալ պակասութեան սեպհա-կան հնարից ՚ի դարմանել զանձինս, չունին և զազգականս՝ որք կարող էին և բարեյօժարք ՚ի պահպանել զնոսա. Երկրորդ այնց այրեաց. որք գոլով յաղքատ վիճակի, ծանրաբեռնեալք են նաև բազմաթիւ ընտանեօք. և Երրորդ որոց չունին ոչ զծնողս և ոչ զմերձաւոր ազգականս, և որբոց՝ որք գտանին ՚ի չքաւորութեան. 4. տալ զօժանդակութիւն այրեաց սրբազնագործ և ստո-րին եկեղեցական պաշտօնէից՝ միայն ցմնալն նոցա ՚ի նոյն այրութեան. որբոց իգական սեռի ցամուսնանալն նոցա. իսկ արական սեռի՝ մինչև ցկատարել հասակ նոցա կամ ցմեկնելն ՚ի դպրոց.

Յօդ. 139.

Զամբողջն տարկեալց յուրաքանչիւր ամսոյ միայն հոգաբարձութիւնն ՚ի ներկայութեան ան-դամոց վիճակային Հոգևոր Իշխանից Լուսաւորչական Հայոց, կամ ՚ի ներկայութեան այլ անձին նշանակելոյ առ այս ՚ի Հոգևոր Տեառնէ.

Յօդ. 140.

՚Ի վերջ իւրաքանչիւր չորից ամսոց հոգաբարձութիւնն առաջի առնէ Լուսաւորչական Հայոց վիճակային Հոգևոր Իշխանին զմանրամասն տեղեկութիւն յաղագս եկամտից, ծախուց, և մնացորդ դրամոցն գանձարանոյ, և ՚ի վերջ ամին զհաշիւ վասն ամ գործողութեանց իւրեանց.

Յօդ. 141.

Գանձապահ պաշտօնէից. Հոգաբարձուքն ենթակայ են ՚ի քննութեան և ՚ի վերահսկողութեան վի-ճակային Լուսաւորչական Հայոց Հոգևոր Իշխանին.

Աստուածատուր Ր[illegible] Խաչատուրեան

Խորհրդարանին Կամ ՚Նախիջևանի.

Թարգմանեաց Գրիգորիս և Խմբագրեաց Լուսաւորչական Հայոց Սինօ-դական Լևոնեանց Ս. Էջ Վարդապետեանց.

(ա) Նորահաւատութիւն. (Պրոզելիտիզմ,) է բառ յունական. այս կերպարանեալ անուն ՝ի կիրառ(?) ՝Ազգաց և ՝Եկեղեցւոյ դառնալ զայլ դաւանութիւն.

(բ) Պրոպականտա. բառիս լատինական գործք, որպէս է խմբել զմի ընդհանրութիւն կրօնաւորական դատաստանի, ... մտադրութեամբ, գաղտնի, աւետարանի, ընդդէմ կրօնի, ՍԷ. ՅՈՒՐԴ-ՍԷՆ, որոնց և այլ ..., որք Լատիներէն Կոչի (Ինկուիզիտոր,) կամ բառ Լատինացւոց կոչմամբ.

(գ) (Միսիոնար.) է բառ Լատինական և նշանակէ առաքեալ ՝ի գործս աշխարհականաց ընդ հովուութեան և զինուորականաց կամ այլոց ընդ հովուութեան, կամ ՝ի մէջս ՝ի մասին հովուութեան կարգաց ընդ Սրբութեան, ընդ և կարգի ՝ի Պատրիարքն ՝ի կայմանէ Հռ-ոմէական կարգաց ընդ Սրբութեան, ընդ և կարգի ՝ի Պատրիարքն ... Օրթոդոքսականաց՝ յորոց հարկն պահանջէ, վասն ներկայ գտանելոյ ՝ի ժամ քննութեան և վճռոյ գործոյն, առ որ նա նշանակեալն է. Պարտաւորութիւն է սորա ... քննութեան և վճռոյ գործոյն, ... ընդ այլ ..., և ունի զմիջոց նկատողութիւն ... ա-ռաջնութիւն ... քննութեան գործոյն. Եւ ՝ի ժամ քննութեանն ունի զձայն հաւատար միւ-թութիւն ... Պատրիարքն Հռոմայ.

(դ) (Պրեֆեկտուրա.) Նոյն բառս դէպուտատ յունի զայն նշանակութիւն որ ՝ի ծանօթութեանն ... ութեան, այլ նշանակէ ընդ պատգամաւոր կամ գործակալ կամ միջնորդ.

(ե) Թէպէտ ՝ի բնագրին Ռուսաց փոխանակ բառին (Չինովնիկ) եդեալ է (Ոչրէմէնի, Պրո-տէկի) բայց որովհետև Հոգեւորական Կառավարութեան մեր ներքոյ ձեռնհասն կոչիւր և ոչ Ոչրէմէն-տէկի, ... կառավարութիւն մերոյն Սինոդի, որ թարգմանեալ է զայս բառ ՝ի Հայոց լեզուս ՝ի Ռուս (Ոչրէմէնի.)ես փոխանակ ... զնոյն ըստ Լատինական նշանակութեան, որպէս է ՝ի մեր լեզու և գրել զայս ծանօթութիւն, զի մի որ ... յանուանէ թարգմանութեան (Պրոտէկի) բառին ձեռնհասն, որ ՝ի Ռուս լեզու ... (Ճինովնիկ) կամ (Ինթոլիէնիի Չինովնիկ.)

(զ) (Սէնդիկուս) է բառ Լատինական և նշանակէ հետամուտ իշխանութեան կամ պաշտօնատարութեան և կամ ընտրեալ.

(է) (Սինկէլլոս) է բառ Լատինական և նշանակէ ժողով կամ Խորհուրդ, ՝ի Հռոմ ՝ի Ռուսաստան Կաթողիկոսք էին ծայրագոյն աւագք առաջին առաջնորդի կամ ... Մինչ-դեռ, այժմ ... այլ տեղիս, և ՝ի տեղի նոցա ունին այժմեան զմնացեալն ... Խորհուրդ ... Կաթողիկոսին, որ է ծայրագոյն ... Նոյն այս բառ ՝ի գոր-ծածի ՝ի տեղի որպէս և իւր անունն՝ ուր գործք վճռին ՝ի վերայ հիման օրինաց.

(ը) Հակամէտ. Ռուսերէն (Պրիքէեկա.)բառս այս ՝ի դատաստանական ատեան ՝ի գործածի, և նշանա-կէ զմիջամտութիւն ... ՝ի մի կողմն, ... Ռուսաց Սինոդ... ... կամ այլոց Խորհրդոյ ..., և ... այլոց, ... որ ... ՝ի ... 

(թ) Օֆիցիալ. է բառ Լատինական և նշանակէ Հոգաբարձու կամ խնամակալ, և առաջնորդ ... ծայրագոյն ... կարգեալ ... Ռուսաց. Պաշտօ-նատարութիւն է սորա նկատել զի ՝ի դատարանս ... և ... 

նորին որդւոց, ձեռնտուեալ լինել որբոց և այրեաց և առ հասարակ ամ. անճարից դատապարտելոց և զկառավարութիւն արքունի սեպհականութեանց և ստորին դատաստանաց ճշդեցուցանել զընթա-ցս դատաստանական քննութեանց։

(Ժ.) Նորընծայ զինուորեալ (վօլնօօպրեդէլեայուշչիյ.) Նորընծայ զինուորեալք կոչին՝ որք յօ-ժարութեամբ իւրեանց մտանեն ՚ի զինուորական ծառայութիւն և վայելեն առանձին արտօ-նութիւնս, յաղագս ստանալոյ զինուորական աստիճանս, առ որ նշանակեալ է սահմանեալ ժա-մանակ ծառայութեան, զոյն իւրաքանչիւր կարէն ունել ստորականք, որդիք Հոգևորականաց եթէ չեն յազնուական տոհմէ, և այլն։

(Սենատոր։) է աստիճանաւոր կարգեալ յամ Կայսեր Ռուսաց՝ որ պաշտպանէ զկարգ-դիւանատանց, իւրաւորանաց և ունի զիշխող նկատողութիւն գործերեկութեան ծառայող Կառա-վարութեան ՚ի դատարանս ՚ի սահմանեալ ժամանակին։

Աստուածատուր Տէրեան.
Յովհաննէս Սարգսեան Նալբանդեանց։

Հայկական ՍՍՀ Պետական Գրադարան
Гос. Библиотека
ЗУАН-Арм.ССР
им. А. Мясникяна
Մյասնիկյանի անվան

# ԳԼԽԱՒՈՐՔ


## ԳԼՈՒԽ 1.

Յաղագս ընդհանրական իրաւանց և արտօնութեանց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ։ — յօդ. 1 — 9.

## ԳԼՈՒԽ 2.

Յաղագս Ծայրագոյն Պատրիարգին Էջմիածնի։ — յօդ. 10 — 32.

## ԳԼՈՒԽ 3.

Յաղագս Լուսաւորչական Հայոց Սին-հոդոսին Էջմիածնի։ — յօդ. 33 — 54.

## ԳԼՈՒԽ 4.

Յաղագս Թեմական Կոնսիստորիաց Լու-սաւորչական Հայոց եկեղեցւոյ։ — յօդ. 55 — 71.

## ԳԼՈՒԽ 5.

Յաղագս Լուսաւորչական Հոգևոր Տեսչաց և Հոգևոր Կառավարութեանց։ — յօդ. 72 — 82.

## ԳԼՈՒԽ 6.

Յաղագս Մենաստանաց։ — յօդ. 83 — 101.

## ԳԼՈՒԽ 7.

Յաղագս ամուսնաւոր Եկեղեցականաց։ — յօդ. 102 — 111.

## ԳԼՈՒԽ 8.

Յաղագս Հոգևոր դպրոցաց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ։ — յօդ. 112 — 116.

## ԳԼՈՒԽ 9.

Յաղագս Կառավարութեան կայից Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց։ — յօդ. 117 — 126.

## ԳԼՈՒԽ 10.

Յաղագս Եկամտից Սրբազնագոյն և այլոց Եկեղեցական պաշտօնէից Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ և յաղագս խնամակալութեան այրեաց և որբոց նոցին։ — յօդ. 127 — 141.



80 u Vh. P.